ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

12.03.2026թ. կնքված N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/37 գնման պայմանագրի

ք. Երևան «01» «06» 2026թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ.Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Լիլանարմ» ՍՊԸ-ն՝ ի դեմս Ընկերության տնօրեն Ն. Պողոյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին՝ (այսուհետև՝ Կողմեր), ղեկավարվելով Գնումների մասին օրենսդրությամբ և հիմք ընդունելով 12.03.2026թ. կնքված N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/37 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.14 կետերը և **Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի** կողմից ներկայացված գրությունը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

*1.Համաձայնագրի առարկան*

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրով նախատեսված՝ **Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Բագրատունյաց 44 հասցեում գտնվող «Էլեկտրոտրանսպորտ» ՓԲԸ շարժակազմի հավաքակայանի վարչական և վերանորոգման (դեպո) մասնաշենքերում թույլ հոսանքի՝ հեռահաղորդակցման և ներքին ցանցի, տեսահսկման և մուտքերի հսկման համակարգերի կառուցման աշխատանքների** կատարման դիմաց վճարման ենթակա գումարը սահմանել 37 192 920 *(երեսունյոթ միլիոն հարյուր իննսուներկու հազար ինը հարյուր քսան) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն*՝ համաձայն սույն համաձայնագրի N 1 հավելվածի:

1.2 Հաստատել սույն համաձայնագրի փոփոխված վճարման ժամանակացույցը՝ համաձայն N 1 հավելվածի:

*2. Այլ պայմաններ*

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. *Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| Երևանի քաղաքապետարան | ԼԻԼԱՆԱՐՄ» ՍՊԸ |
| ք. Երևան, Արգիշտիի փ. 1 | Ք.Երևան, Նուբարաշեն 12փ.4շ բն 6 |
| ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | «ԱԿԲԱԲԱՆԿ» ԲԲԸ |
| Հ/Հ 900012001351 | Հ/Հ 220613330251000 |
| ՀՎՀՀ 02593108 | ՀՎՀՀ 00433589 |
| Վ.Պապիկյան ---------------------------- (ստորագրություն) Կ.Տ | Ն.Պողոյան---------------------- (ստորագրություն) Կ.Տ |

Հավելված թիվ 1
12.03.2026 կնքված N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/37 գնման պայմանագրի
« 01 » « 06 » 2026թ. կնքված թիվ 1 համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/Հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45221142/522 | Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Բագրատունյաց 44 հասցեում գտնվող «Էլեկտրոտրանսպորտ» ՓԲԸ շարժակազմի հավաքակայանի վարչական և վերանորոգման (դեպո) մասնաշենքերում թույլ հոսանքի՝ հեռահաղորդակցման և ներքին ցանցի, տեսահսկման և մուտքերի հսկման համակարգերի կառուցման աշխատանքներ | - | - | - | - | - | 16 736 814 | 26 035 044 | 26 035 044 | 26 035 044 | 37 192 920 | 37 192 920 | 37 192 920 | 37 192 920 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով.

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900012001351
ՀՎՀՀ 02593108

Վ.Պապիկյան ________________
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
ԼԻԼԱՆԱՐՄ» ՍՊԸ
Ք.Երևան, Նուբարաշեն 12փ.4շ բն 6
«ԱԿԲԱԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220613330251000
ՀՎՀՀ 00433589

Ն.Պողոսյան ________________
(ստորագրություն)
Կ.Տ

27 մայիսի 2026թ.

Թիվ 06/1- 1320

# ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
# Թիվ 20 61 40 426315/340

*(պայմանագրի ապահովում)*

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «ԼԻԼԱՆԱՐՄ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև թիվ «ԵՔ-ԳՀԱԾՁԲ-26/37» պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին անվերապահորեն վճարել 3.730.000 (երեք միլիոն յոթ հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար) Պահանջը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է մինչև 31 մայիսի 2029թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ gohar.buniatyan@yerevan.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) N «ԵՔ-ԳՀԱԾՁԲ-26/37» պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) Բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե.

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին,

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Կորպորատիվ ՀՀՀԿ բաժնի պետ** **Հ. Շախաթունյան**

*Կատարող՝*
*Գայանե Գալստյան*
*Հեռ.՝ 010 31-88-88 (ներքին՝ 8251)*

27 մայիսի 2026թ.

Թիվ 06/1- 1319

# ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
# ԹԻՎ 20 61 40 426315/339

*(որակավորման ապահովում)*

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից թիվ «ԵՔ-ԳՅԱՇՁԲ-26/37» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ԼԻԼԱՆԱՐՄ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) կողմից թիվ «ԵՔ-ԳՅԱՇՁԲ-26/37» պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել 5.595.000 (հինգ միլիոն հինգ հարյուր իննսունհինգ հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար) Պահանջը ստանալուց 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է մինչև 31 մայիսի 2028թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ gohar.buniatyan@yerevan.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) N «ԵՔ-ԳՅԱՇՁԲ-26/37» ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) Բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե.

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին,

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Կորպորատիվ ՀՀՀԿ բաժնի պետ** **Հ. Շախաթունյան**

*Կատարող՝*
*Գայանե Գալստյան*
*Հեռ.՝ 010 31-88-88 (ներքին՝ 8251)*